



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԹԻԻ 18.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

# ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

## ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ՔԱՅՈՒՄ 1870 ՉՄԻՆ

ՆԻՍ ՈՒԹԵՆՏԱՍԵՐՈՐԴ

12 ԳԵՏՎԱՐ 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե՝ ՄԻԻԷԷՆՏԻՍԵԱՆ

— 1871 —

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Ժ Ը .

12 ՓԵՏՐՎԱՐ 1871.

ՆԱԽԱԳԱՀ . — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ . — ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ . (Առժամանակեայ կարգեալ)

## ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Վաւերացումն ատենագրութեանց նախընթաց նիստերուն :
- 2° Վաւերացումն ընտրութեանց նորընտիր երեսփոխանաց :
- 3° Ազգային չիւն պարտք :
- 4° Ատենական կանոնադրութիւն :
- 5° Վերաքննութիւն Սահմանադրութեան :

Ատենան քանաչու որոշեալ ժամն անցած եւ զեռ եւս երեք Ատենապետներէն եւ ոչ մէկն եկած ըլլալով, որոնցմէ Ազարէկեան էֆ. հիւանդ էր արդէն եւ Գիւանին ծանուցած, ժողովականաց ինչ ինչ դիտողութիւններէ ետքը՝ ոմանք առաջարկեցին որ Ռուսինեան էֆ. վարէ այսօր ատենապետութեան պաշտօնը :

Ռուսինեան էֆ. այս մասին ժողովականաց կամքըն իմանալու համար առաջարկութիւնը քրէ էի դրաւ եւ ընդունովէն ետքը՝ ըստ այնմ ատենանը բացաւ ժամը Տին : Ներկայ երեսփոխանաց թիւն էր 59, որ վերջապէս 63ի յանգեցաւ :

Ատենապետ էֆ. ժողովին ծանոց թէ երկու հրաժարագրեր եկած են Գիւանին . եւ անոնցմէ նախ Ալթուն Ա. էֆ.ի հրաժարականն ընթերցաւ, որով հրաժեշտ կու տար Ալթուն էֆ. Գ. Ատենագրութեան պաշտօնէն՝ յոր ընտրված էր նախորդ նիստին մէջ, անձնական իրական արդեւքներ պատճառելով :

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Թէպէտ քանի մը նիստ առաջ սրտված է թէ ո՛վ որ առանց նկատողութեան արժանի պատճառներու հրաժարական

դրկէ, ընդունովի այն . բայց եթէ ներելի է՝ կ'առաջարկեմ որ Ս. Պատրիարք Հայրն անգամ մը կանչէ զԱլթուն էֆ. եւ համոզէ, որպէս զի նոր ընտրութեան համար կրկին ժամանակ չը կորուսնէ ժողովը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ժողովն որոշած է արդէն հրաժարականներն անմիջապէս ընդունիլ՝ երբ հրաժարողը բնաւ որ արդեւք ունիմ կամ անկարող եմ ըսէ, վասն զի բնազատեալ պատճառովարութեանն ինչ արդիւնք կրնայ ծնանիլ . իմ կարծիքս Երեմիա Սրբազանին կարծեաց համաձայն չ'է այս մասին, եւ կ'ըսեմ թէ հրաժարականը չ'ընդունիլը մեր գործոց արդեւք բերել է :

Տ. ԱՄԲԲՈՍԻՈՍ ՎՐԳ. — Նոյնը կը կրկնեմ եւ ես : Եթէ Ա. Ատենապետին հրաժեշտը յետս կոչել տալու համար ժողովը զանի համոզել եւ հաւանեցնել հարկադրեցաւ, այս հարկը ամենուն համար չ'է . եւ եթէ ամենուն համար այնպէս ընենք, մեր ըրածը պարզապէս նախորդ սովորութեան վերադառնալ պիտի ըլլայ որ օգտաբեր չ'է :

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Պարզ խնդիր մըն է այս .

ժողովը Ալթուն էֆ. ի պաշտօն մը տուաւ, նա իւր պաշտօնէն կը հրաժարի. ժողովը կ'ուզէ կ'ընդունի, կ'ուզէ կը մերժէ այդ հրաժարը. եւ երբ չ'ընդունի Ալթուն էֆ. պարտաւոր է գալ հոս եւ իրեն յանձնված պաշտօնը վարել:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կը կրկնեմ Ապրօ էֆ. ի խօսքը:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Հրաժարականներու խընդիրն արդէն լուծված ու որոշված է, հարկ չը կայ նորէն յուզելու:

Հուսկ ուրեմն Ատենապետ էֆ. քրէի կը դնէ այս հրաժարականը որ 18 քրէի դէմ 20 քրէով կ'ընդունի:

Ատենապետ էֆ. ժողովոյն հաղորդեց միւս հրաժարագիրն ալ՝ զոր ուղղած էր նորընտիր երեսփոխան ֆանոսեան Կարապետ էֆ. եւ որ երեսփոխանական պաշտօնէ հրաժարելու անձնական արգելք կը պատճառէր: Ատենապետ էֆ. ժողովոյն կարծիքը խնդրեց:

ՍԸՎԱՃԵԱՆ Յ. ԷՖ. — Քանի որ դեռ կ'ըստ ֆանոսեան էֆ. ի ժողով չ'է եկած՝ որ զինքը երեսփոխանական ժողովոյ անդամ ճանչնայինք, ինչպէս կրնանք իւր այդ պաշտօնէ հրաժարելու ընդունիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիտել կու տամ Սըվաճեան էֆ. ին որ, ֆանոսեան էֆ. օրինաւորապէս երեսփոխան ընտրեալ է եւ իւր ընտրութիւնը ժողովէն վաւերացեալ:

ՏԵՐՈՅԵՆՅ Յ. ԷՖ. — Փանոսեան էֆ. ասկէ առաջ ինչպէս գիտեք, մէկ քանի թաղերէ ալ երեսփոխան ընտրվեցաւ, բայց եւ ոչ մէկին յանձնառու եղաւ. այս ալ նկատողութեան արժանի պարագայ մըն է:

Ատենապետ էֆ. քրէի կը դնէ ֆանոսեան էֆ. ի հրաժարականը, եւ ժողովը կ'ընդունի զայն:

1. ՎԱԻԵՐԱՅՈՒՄՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆՅ ՆԱԽԸՆԹԱՅ ՆԻՍՏԵՐՈՒՆ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այսօրուան առաջին խընդիրը նախնիաց նիստերու առնազրութեանց վաւերացումը պիտի ըլլար թէպէտ՝ ըստ խընդրոց կարգի, բայց ցաւօք կը յայտնեմ թէ՛ ա՛նոնց սպազրութիւնը դեռ եւս աւարտած չ'է, եւ միայն Ժ.Ն. նիստինը ելած ու այն ալ երես-

փոխանաց գրեթէ այսօր հաղորդված է. ուստի հարկ կ'ըլլայ երկրորդ խնդրոյն անցնիլ:

2. ՎԱԻԵՐԱՅՈՒՄՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՅ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ:

Սամաթիոյ թաղին երեսփոխաններէն պակասած երեք անձանց համար վերջին անգամ կատարված ընտրութեան տեղեկագիրը՝ Գործադիր Յանձնաժողովոյ կողմէ Դիւանին հաղորդված ըլլալով, Ատենապետ էֆ. խօսք կ'անու եւ կ'ընթեռնու զայն, որ աւասիկ:

Ամենապատիւ Սրբազան Հայր, եւ այլն.

Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյ Թաղ. Խորհուրդը իր թաղէն պակասած երեք երեսփոխանաց ընտրութիւնը ըստ օրինի կատարած ըլլալով, Ընդհանուր ժողովոյդ վաւերացմանը ներկայացնելու համար Գործադիր Յանձնաժողովոյս կը տեղեկագրէ թէ՛ 1871 յունվար 17ին Խորհրդոյն վրայ 6 անձ աւելցնելով Ընտրողական ժողովը կազմած, յունվար 24ին քրէարկութիւնը կատարած եւ 484 ընտրողներէ միայն 66 քրէարկու ունեցած, եւ առնց բացարձակ քրէովը երեսփոխան ընտրված է:

Թորոս էֆ. Նազարեան 48 քրէով:

Մնացեալ երկու երեսփոխանաց համար յունվար 31ին կրկին քրէարկութիւն ըրած, այս անգամ 68 քրէարկու ունեցած եւ համեմատական առաւելութեամբ երեսփոխան ընտրված են.

Սիմօն էֆ. Միքայելեան 54 քրէով:

Յարութիւն » Թիւրեան 51 »:

Գործադիր Յանձնաժողովս թէ ընտրութիւնը եւ թէ ընտրելեաց անձնական հանգամանքը Սահմանադրութեան սրամադրութեանց համաձայն եւ օրինաւոր գտնելով, ներկայ տեղեկագրովս կը խնդրէ Ձեր Սրբազնութեանէն որ Ազգ. Երեսփոխանական ժողովոյ վաւերացմանը ներկայացնելու բարեհաճիք:

Մնամ եւ այլն.

Գործ. Յանձնաժողովոյ Ատենապետ Օ. ՌՅԱՍՄԵԱՆ:

Այս ընտրութիւնները քրէի կը գրվին, կ'ընդունվին ու կը վաւերանան ժողովէն:

Ատենապետ էֆ. Առ Ս. Պատրիարքն ուղղելով խօսքը, կը խնդրէ որ այս նորընտիր երեսփոխանաց առաջին անգամի համար յատուկ հրաւիրագիր ղրկելով, զիրենք յատուկ ջիկայ նիստին հրաւիրէ պաշտօնապէս:

3. ԱԶԳԱՅԻՆ ՀԻՆ ՊԱՐՏՔ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ազգային հին պարտուց խնդրոյն վերաբերեալ պաշտօնական տեղեկագիր մը կայ մեզի հասած Ս. Պատրիարք Հօր եւ Քաղ. ժողովոյ կողմէ, զոր անա ժողովոյն ուշադրութեանը կը ներկայացնեմ:

Վսեմախալ Ատենապետ Ազգ. Ընդհ. ժողովոյ Քաղաքական ժողովն իր պաշտօնին գլուխն անցած օրէն ազգային ելմտական վիճակը՝ որ վարչական գործոց մեքենային շոգին է, նրկատողութեան առնելով կէտ նպատակի դրուիրեն, տարեկան հաշուեկշռին բացը գիմաւորելու համար ազգայնոց ձեռնառութեանը դիմել, եւ այս նկատմամբ երեսփոխանական ընտրողներէն 75ական եւ անոնցմէ դուրս մնացած շահու տէր, ազգայիններէն 25ական զըտուրք հաւաքելու ձեռնարկեց:

Իսկ հին պարտուց խնդրոյն սնօրէնութիւնը եւ վճարման հոգը ըստ որում Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը կ'ըստանձնէր, առանց այս մասին միջամտութիւն մ'ընելու, միայն Նորին Սրբազնութեան ջանիցն ու աշխատութեանցն աջակցիլ խօստացաւ, ինչպէս որ այն առեւ Քաղ. ժողովն իւր հրատարակած հիմնագծին մէջ յիշատակած էր զայս:

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրն այս պարտուց բարձման համար Ազգէն կամաւոր նուէր մը հաւաքելու ձեռնարկելով 23880 զըշխ գումար մը ժողովից եւ զանազան անձանց հին առնելիքները վճարեց. սակայն ի վերջոյ պարտաւորեցաւ Նորին Սրբազնութիւնը գործն ընդհատել ինչ ինչ պատճառներով, եւ խնդիրը Ընդհանուր ժողովոյդ առեանը հանելով անոր հեղինակութեան ենթարկել: Այս ընդհատման պատճառներն Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը արդէն նախորդ նիստին մէջ ծանոյց եւ աւելորդ է զանոնք հոս կրկնել:

Արդ, որովհետեւ Ընդհանուր ժողովն իւր բարձր հեղինակութեամբ այս հին պարտուց խնդրոյն վրայ իւր որոշումը պիտի տայ, Քաղ. ժողովը Տնտեսական Խորհրդէն այս մասին տեղեկագիրք մը ստանալ պարտ համարելով, զայն պատկառելի ժողովոյդ ներկայացնելու առթիւ հարկ կը գաւի նաեւ գիտել թէ՛:

Ա. Հին պարտուց խնդիրը պէտք է ուրոյն նկատել եւ անոր բարձմանը համար, առանձին միջոց մը ի գործ դնել, առանց զայն Վարչութեան կողմէ ի նպատակեղորոնական սնտուկի հաւա-

քելու ձեռնարկված սաղաթի քրոջ հետ շփոթելու, որպէս զի Պատրիարքարանի մատակարարութեան առջեւ արգելքներ չ'ենեն:

Բ. Այս կէտը իւր սկզբունք ընդունելէ ետեւ՝ Քաղ. ժողովը հարկ կը գաւի որ, Ընդհանուր ժողովոյ կողմէն յատուկ յանձնախումբ մը գրվի, որ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր նախագահութեամբ եւ իւր պատասխանատուութեան ներքեւ հին պարտուց բարձման համար որոշված միջոցը գործադրէ եւ վճարքները կատարէ:

Քաղաքական ժողովն այս առաջարկութիւնն ընելով կը յուսայ որ պատկառելի ժողովը զայն ուշադրութեան կ'անու եւ պարտաւորապէս որոշումը կ'ընէ:

Պատրիարք Հայրոց Ատենապետ Քաղ. ժողովոյ ԻՐՈՒՅՆ:

Ահաւասիկ նաեւ ասոր մէջ յիշված Տնտեսական Խորհրդոյ տեղեկագիրը:

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայր, եւ այլն.

Կեդրոնական սնտուկին պարտուց գումարը եօթը բեւի կը հասնի. այս պարտքը ամենը մէկէն վճարելու կամ թէ՛ առանձին պարտուց վճարման համար ազգայիններէ յատկապէս ստակ հաւաքելու փորձերը մինչեւ ցարդ ապարդիւն ելած ըլլալով, Տնտեսական Խորհուրդըս ազգայնոց վրայ շի ծանրանալու եւ վրճարման հնարաւոր եղանակի վրայ մտածելով, կը փութայ հետեւեալ առաջարկութիւնը ներկայացնել Քարեխանա Վարչութեանը:

Ուղղակի տուրքէն հաւաքեալ արդիւնքին կէտը հին պարտուց յատկացնել, այնպէս որ տարուէ տարի զեղջիկ եւ ջնջվի պարտուց քանակութիւնը:

Պարտուց վճարման յանձնաժողով մը հաստատել, եւ ինչպէս որ նշանաւոր եւ անցողորատան արդիւնքէն Հիւանդանոցի բաժինը կը գատվի եւ կը յանձնվի Հիւանդանոցի Հոգաբարձութեան, այսպէս նաեւ ուղղակի տուրքէն հաւաքեալ արդիւնքին կէտը անմիջապէս յանձնվի պարտուց վճարման Յանձնաժողովին:

Կեդրոնական սնտուկը այժմեան վիճակին մէջ ուղղակի տուրքէն 50000 զըշխ պէտք ունի. բայց ազգային Պատրիարքարանը ազգայնոց բաղձանքին համաձայն վիճակի մէջ կարելի եղածին չափ դնելու համար գոնէ 40000 զըշխ աւելի ծախքի մը պէտք կայ. ըսել է 45000 զըշխ պէտք մը. նոյնչափ գումար մ'ալ հին պարտուց վճարման սահմանելով, 30000 զըշխ պէտք կայ:

Այս գումարը հայթայթելու համար պէտք է .  
1. Կ. Պօլսոյ մէջ գտնվող շահու տէր ազգա-  
յիններէն ուղղակի տուրք հաւաքել .

2. 75 դր. ի տուրքը օրինաւոր տուրք համա-  
րել , եւ առ հասարակ շահու տէր ազգայիններէ  
պահանջել . անոնք որ 75 վճարելու անկարող  
են , 25 դր. վճարեն , ի բաց առեալ բոլորովին  
անկարողները :

3. 75 է վեր տարեկան տուրք վճարելու ձե-  
ռնհաս ծանուցեալ ազգայինները հրաւիրել , որ  
իրենց տարեկան տուրքը որոշեն :

4. Թաղական Խորհրդոց միջոցաւ հաւաքել  
տուրքը . եւ 0,10 թողուլ իրենց իրբու հաւաք-  
չի վարձք :

5. Այն Թաղ. Խորհուրդը որ անփոյթ կը  
գտնվի այս արոց հաւաքման , երկու անգամ ազ-  
գարարութենէ ետքը ամբաստանութեան ներ-  
քեւ համարել :

6. Իր տուրքը ժամանակին չի վճարող ազ-  
գայինը սահմանադրապէս զրկեալ համարվելով  
իր ազգային իրաւունքներէն , թէ Թաղ. Խոր-  
հրդոց եւ թէ Կեդր. Վարչութեան միջոցա-  
ռուննալիք գործողութեանց միջոցին պահանջել :

Անդամք Տնտեսական Խորհրդոյ  
Դ. ՀՈՂՈՒՅԱՆ Ա. ՅՐԷՆԵԱՆ Բ. ՂԱՅՐՈՍԵԱՆ

Այս տեղեկագրերուն ընթերցումէն ետեւ ,  
Ատենապետ էֆ. հրաւիրեց ժողովն իւր կար-  
ծիքը յայտնել այս խնդրոյն վրայ :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Պէտք է նախ սկզբունքն  
որոշել ու յետոյ ընդհանուր պարագայից վրայ  
փիճել . իմ դիտողութիւնս սա կէտին համար  
պիտի ըլլայ թէ՛ ժողովը պէ՛տք է արդեօք այ-  
սօր ընդհանուր պարտուց վրայ խորհի :

Ազգային պարտուց վճարման խնդիրն ան-  
քակտելի կիրպով կապված է ազգային պիւտ-  
ճէին հետ . վերջինը չը կարգադրած առաջինը  
լուծել աւագի վրայ հիմ դնել է :

Համարենք թէ այսօր Ազգային Երեսփոխա-  
նական ժողովը , առանց պիւտճէն կարգի զը-  
նելու , լուծէ պարտուց խնդիրը ու վճարվին  
Ազգին պարտքերը . ի՞նչ ապահովութիւն քիչ  
ատենի մէջ նոր պարտքեր չը դիվելուն : Բայց  
եթէ պիւտճէի խնդիրն ալ ուղղի պարտուց վը-  
ճարման հետ միանգամայն կարգի դնել , ասոր  
ալ ժամանակը չ'է կրսեմ . որովհետեւ նախ  
Սահմանադրութեան վերաքննութիւնը կատար-  
վելով ազգային սահմանադրական օրինաւոր  
վարչութիւնը վերահաստատվելու , ժողովոց  
ու խորհրդոց յարաբերութիւնները կարգի դըր-  
վելով օրինաւոր համարատուութիւն ու հա-

մարտաութիւն հաստատվելու եւ յետոյ պիւտ-  
ճէի խնդիրը կարգի դրվելու է , որպէս զի օ-  
րինաւոր համարատուութեան խուսափմամբ  
պիւտճէի հաւասարակչութիւնը խախտելով  
նոր պարտուց տեղի չը տրվի : Կո՛ւ կարծիքս այն  
է թէ՛ ազգային վարչութեան ներկայ փիճա-  
կին մէջ հիմնական բան կարելի չ'է ընել , այլ  
ամեն դարման առժամանակեայ կրնայ ըլլալ .  
ուստի եթէ պարտուց կամ անոնց մէկ մասին  
վճարումը ստիպողական է , ազգային գործադիր  
իշխանութեան կիցնայ անոնց առժամանակեայ  
դարմանը խորհի :

Իսկ երեսփոխանական ժողովը պէտք է որ  
հանգարտ ոգւով անընդհատ իր մեծ գործը ,  
այն է՝ ազգային Սահմանադրութեան վերաքնն-  
նութիւնը ի գլուխ հանէ . առ այժմ անկէ դուրս  
ամեն խնդիր միջանկեալ են իրեն համար ,  
ըստ որում այսօր Երեսփոխանական ժողովն ու  
իրեն հետ ի միասին Ազգը առանց կողմնացոյցի  
ովկիանստի մէջ՝ երեքօղ նաւու մը փիճակն ունի-  
ր կողմնացոյցը Սահմանադրութիւնն է , պէտք  
է որ ժամ առաջ զայն ձեռք անցընէ , որպէս  
զի իր ընթացքն ուղղէ :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Սպասել որ ազգային  
պիւտճէ մը հաստատվի , սպասել որ օրինաւոր  
պիւտճէ մը պատրաստելու համար Սահմանադ-  
րութեան վերաքննութիւնը լիննայ , բայց պար-  
տապահանջները չ'են կրնար սպասել , բայց Ազ-  
գը չը կրնար անօթի կենալ . ուստի քանի որ  
Երեսփոխանական ժողով կայ եւ քանի որ օ-  
րինաւոր Վարչութիւն կայ , պէտք է գոնէ առ-  
ժամանակեայ պիւտճէ մը պատրաստել . եւ այս  
ալ քանի մը նիստի գործ է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պէկեան էֆ. կ'ըսէ  
թէ Երեսփոխանական ժողովն առանց կողմնա-  
ցոյց ունենալու կը շարժի , բայց գիտնալու է  
որ ձեռվընիս 63 ի Սահմանադրութիւնն ունինք՝  
այսօր գործադրութեան մէջ . ըսել է կողմնա-  
ցոյց ունինք :

Պարտուց խնդրոյն կատարմամբ երկու պաշտօ-  
նական դրութիւնք ներկայացած են մեզի , մէ-  
կը Քաղաքական ժողովին կողմէն եւ միւսը  
Տնտեսական Խորհրդոյ : Քաղ. ժողովը կ'ըսէ ,  
պարտուց խնդիրը ուղղակի արոց խնդրոյն հետ  
չը խառնենք , այլ Ընդհանուր ժողովի կողմէն  
յանձնախումբ մը կազմվի որ պարտուց վճար-  
ման նոր միջոց մը գտնէ եւ գործադրէ : Իսկ  
Տնտեսական Խորհուրդը կ'ըսէ , ուղղակի արոց  
հասոյթին կէտը պարտուց վճարման յատկանայ  
եւ գործածվի յատուկ յանձնաժողովի մը ձե-

ուրք : Եւ ինչպէս իր տեղեկագրին մէջ յայտ-  
նած է , կեդրոնական անտուկը ուղղակի արոց  
հաւաքումէն տարեկան 50000 դր. ի ստիպո-  
ղական պէտք ունի Պատրիարքարանին արդի  
փիճակին մէջ , եւ աւելի լուսագոյն փիճակի մը  
համար 100000 դր. ի եւս , որով այս պէտքը  
150000 դր. ի կը լրանայ , նոյնչափ մ'ալ մէկ  
տարուան մէջ պարտուց վճարման յատկանե-  
լով ըսել է որ տարուան չըջանին մէջ 300000  
դր. ուղղակի տուրք պէտք է հաւաքել Ազ-  
գէն : Այս երկու առաջարկութեանց տարբե-  
րութիւնը սա է որ , մէկը՝ ուղղակի արոց հա-  
ւաքումը յառաջ տանիլ եւ ընդարձակել է , իսկ  
միւսը՝ անուղղակի հանգանակութեան դիմել :  
Արդ՝ մինչեւ հիմայ անուղղակի միջոցներով  
դժուարին եղած է Ազգէն 300000 դուրուշ  
հաւաքել տարին , ինչպէս փորձով ցուց-  
վեցաւ : Հազիւ 23-24000 կրցաւ հաւաքել  
վերջին անգամ Ս. Պատրիարքը անուղղակի  
կերպով , մինչդեռ վեց ամսուան մէջ 50000  
դր. տուրք առնված է Ազգէն՝ առանց մաս-  
նաւորապէս չըջապայօղ հաւաքիչներու : Եթէ  
հաւաքման եղանակն ընդհանրացնենք , եւ ինչ-  
պէս ըսաւ Տնտեսական Խորհուրդը՝ այդ հա-  
ւաքումը Թաղական Խորհրդոց յանձնենք՝ անոնց  
անտուկներուն տասանորդ տալու պայմանաւ  
եւ զիբենք պարտաւորելու թէութեամբ , որ  
եթէ անփոյթ մնան հաւաքման՝ երկու անգամ  
ազգարարութենէ ետքը ամբաստանութեան  
տակ համարվին , այն ատեն կանոնաւորապէս  
չատ աւելի տուրք կը հաւաքվի Ազգէն :

Խնդիրը սկզբունքի վրայ է , ետքսել կ'ուզեմ  
որ Ազգը պարտք տալու վարժեցնելու չ'է ,  
այլ տուրք տալու . խնդրոյն էական կէտը այս  
է ըստ իս . վասն զի այսօրուան պարտքը վճարե-  
լու համար եթէ անուղղակի միջոցներու ձեռնարկ-  
վի եւ յաջողի , նոյնպէս պիտի ըլլայ նաեւ վաղ-  
ուան գոյանալիք պարտուց համար . քանի որ  
ժողովուրդը փոխանակ տուրք տալու՝ պարտք  
տալու կը վարժեցնենք . ուստի կ'առաջարկեմ  
որ Քաղ. ժողովը պարտաւոր ըլլայ իւր ճիւղե-  
րուն միջոցով այդ տուրքը հաւաքելու :

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՖ. — Ինչպէս ըսի խօսքի սկը-  
սած ատենս՝ նախ սկզբունքը որոշվի յետոյ  
պարագայից վրայ խորհինք . Ընդհանուր ժողո-  
վը պէտք է սկզբունքին վրայ փիճարանի ա-  
ռաջ . ուստի կը հարցնեմ թէ ժողովը պիտի  
ընդունի՞ որ այս խնդիրը իւր ատենը դայ .  
ասի որոշվելէ ետքը՝ ես խօսելիք ունիմ ֆա-  
փագեան էֆ. ին : Իսկ Պատնասեան էֆ. ի ըսա-

ծին դալով կը պատասխանեմ թէ՛ ես չ'ըսի որ  
Ազգը անօթի մնայ , այլ ըսի թէ՛ Ընդհա-  
նուր ժողովը պէտք է իր գլխաւոր գործո-  
վը՝ այն է Սահմանադրութեան վերաքննու-  
թեան գործովն զբաղի , եւ եթէ պարտուց կամ  
անոնց մէկ մասին վճարումը ստիպողական է՝  
պէտք է Վարչութիւնն առժամանակեայ միջոց-  
ներ ի գործ դնէ այս խնդրոյն համար :

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Ես հաշուագիտական  
հմտութիւն չ'ունիմ բայց ցաւ մ'ունիմ յայտ-  
նեմ . իմ անաչառապէս խօսելուս համար կը  
ցաւին ոմանք եւ իմ վրայ կը դանդախն ,  
բայց ես եկեղեցական եմ , հարկ է ինձ առանց  
աչառութեան խօսիլ :

Գաւառներն ու Կ. Պօլիս պիտի բաղդատեմ .  
Գաւառներն ունին վանքեր , եկեղեցիներ ,  
գաղտնիք եւ առաջնորդարաններ . գաւառացի  
ժողովուրդն ատոնց ամենուն համար ալ տուր-  
քեր եւ նուէրներ կ'ուտայ անարտուշ , եւ  
միւս կողմէ կառավարութեան ալ դանաղան  
տեսակ հարկեր կը վճարէ . ցաւ է ինձ տես-  
նել որ Պօլսեցիք ամեն բանի մէջ մեծ տեղ կը  
բռնեն եւ իրենց պարտք վճարելու կը տա-  
տամսին . . . . .

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բացված խնդիրը գաւա-  
ռայնոց վրայ չ'է , Սրբազան , կը խնդրեմ որ  
բուն խնդրոյն վրայ ձեր ունեցած կարծիքը  
յայտնէք :

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — ( Շարունակելով ) Սրբի-  
նակ բերելու համար գաւառայնոց վրայ խօսե-  
ցայ : Ըստ իս պէտք է ամեն Հայ այս պարտքն  
իրենը համարի , ազգային հին պարտուց վըճա-  
րումը կարեւոր խնդիր է այսօր , զի պարտա-  
պահանջը հանապազօր կը նեղեն Ս. Պատրիար-  
քը : Ես համարիտ եմ Փափագեան էֆ. ի թէ  
Պօլսոյ ժողովուրդը տուրքի վարժեցնելու է .  
ուստի կ'առաջարկեմ կէսն եկեղեցականներէ եւ  
կէսն աշխարհականներէ բաղկացեալ յանձնա-  
խումբ մը կազմել , անհատներէ տուրք հաւա-  
քելու համար :

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — ( յանձն Գաղ. Ժող. ) կը տեսնեմ  
եւ կը ցաւիմ որ խնդիրը պարզելու տեղ շփոթու-  
թեան մէջ կը դնենք . այսօր Հայոց Ազգը պարտք  
մը ունի , այս պարտուց տէրը աւագանի անուն  
ուրեցող մասնաւոր անհատ մը չ'է , այլ ամեն ա-  
նոնք որ Հայ անունը կը կրեն :

Քաղաքական ժողովն այս պարտուց խնդի-  
րը բարեկարգութեան դէմ արգելք մը կը նը-  
կատէ , եւ ամենայն իրաւամբ . զի միշտ խել  
մը դժուարութիւն եւ խոչ ու խուժ կը յա-

բուցանէ իրեն դէմ, եւ ահա այս պատճառին համար դործադիր իշխանութիւնը Ընդհ. Ժողովոյ ատենանք բերաւ այս խնդիրը: Ասոր վրայ պիւտանէի առարկութիւններ եղան. իրաւ պիւտանէի մէջ սովորաբար պարտքեր կը նշանակվին, բայց մերը Տէրութեան պիւտանէ չ'է, Տէրութեան պարտքեր չ'են մեր գրելիքը: այսպիսի առարկութիւններով խնդիրը կ'երկարաձգի եւ Ազգը պարտքէն չ'ազատիր:

Ահաւասիկ մինչեւ հիմայ ինչ եղած է. ամեն մարդ զիտէ եւ յայտնի է որ վեց տարիէ ի վեր բնական ուղղակի տուրք չ'է հաւաքված, այլ միայն անուղղակի եւ արտաքոյ կարգի նըւէրներ մտած են Պատրիարքարանի սնտուկը, եւ ահա ասոր համար Ազգին զխղված պարտքերը անվճար մնացած. եւ կարելի է յաւելցած իսկ են: Արջութիւնն այժմ փոքր ի շատե ուղղակի տուրք մը կը հաւաքէ նորէն պարտք չը ձգելու համար, սակայն պէտք է զիտնալ որ ամեն բարեկարգութիւն դրամով կ'ըլլայ. ազգի մը յառաջագիմութեան տարեքններէն մին ալ ստակն է, երբ ժողովուրդը տուրք չը վճարէ, անկարելի է որ ազգային գործերը բարեկարգ ընթանան. եթէ մեր ազգային նիւթական պիտոյից մասնակցելու յօժարամտութիւն չ'ունենանք, եթէ մեր ազգային պատիւը պահելու նախանձախնդիր չ'ըլլանք, մէկ խօսքով եթէ այս ողին չը կրննք, ըսել կ'ըլլայ թէ մեր ազգային կենդանութիւնը մեռեալ է: Ար զիտեմ եւ փորձով իսկ սեսած եմ որ Պօլսեցի Հայոցս մէկ մասը օրինաւորութիւն, յառաջագիմութիւն կը պօտանք, դպրոց, դաստիարակութիւն կ'ազդակենք, ի մի բան՝ ազգային ամեն բարիք կը պահանջենք, բայց, ցաւ ի սիրտ կ'ըսեմ, երբ կարգը ստակ տալու գայ կը դանդաղինք եւ կը դժուարինք:

Սակայն արդի ժամանակիս մէջ, ինչպէս ըսի, որ կողմ դառնանք, ինչ բանի ձեռնարկենք, առանց դրամի եւ ո՛չ մի գործ կրնանք սեանալ, ինչպէս նաեւ Ազգ. Արջութեան պիտոյքը առանց անոր անկարելի է տնտեսել:

Պարտապահանջը Պատրիարքարանի գիմելով իրենց իրաւունքը կը պահանջեն, կը թախանձեն, կը նեղեն, եւ այս պատճառաւ Ս. Պատրիարքը սրտատանջ հիւանդութեանց ենթակայ եղաւ. քանիցս Եղածը միայն այսչափ չ'է, ամանք իրենց առնելիքը ձեռք բերելու համար մինչեւ իսկ Բ. Գրան կը զիտեն եւ ասով Ազգին արժանապատուութիւնը կը թշնամանվի: Ես իբրեւ Հայ իմ մասիս չ'եմ ընդունիր այս

անպատուութիւնը, ուստի եւ հարկ է կ'ըսեմ այսօր անմիջական որոշում մ'ընել այս խնդրոյն համար, անօրէնութիւն մը՝ որ ամբողջապէս վերցնէ ջնջէ այս պարտքը:

Քաղ. Ժողովոյ տեղեկագրին վերջին մասը՝ որ Տնտեսական Խորհրդոյ առաջարկութեան կը վերաբերի, բացատրելու համար կ'ըսեմ որ, մեր նպատակն այն է թէ՛ պարտքը՝ որ հիւանդութիւն մ'եղած է Ազգին անմիջական զեղի եւ դարմանի կարօտ, միանգամ վճարվի եւ վերնայ մէջտեղէն, ուստի եւ կը փափաքինք որ անոր յատկացեալ հասոյթ, հաշիւն ու վճարումը Պատրիարքարանի ընթացիկ ելուժուտքէն բոլորովին դատ եւ բաժան մնայ, որպէս զի իբրեւ տարափոխիկ ախտ չ'ածանցի ապագային, ապա թէ ո՛չ այս երկուքը իրար կը խառնվին եւ բարեկարգութիւնք կը խանդարին:

Խնդիրն ուրիշ ճամբու մէջ դնող էՖ. ներուն կը պատասխանեմ թէ՛ գործադիր իշխանութիւնն այս ժողովէն կ'ուզէ պարտուց խնդրոյն վերաբերեալ որոշումը, առանց որոյ այս մասին բանի մը չը կրնար ձեռնարկել, եւ ոչ իսկ փոխառութիւն ընել եւ տոկոսօք ստակ առնելով պարտք վճարել. գործադիր իշխանութիւնը կ'ուզէ վերջապէս որ խնդիրը յանձնախուճի մը յանձնվի, ու այն յանձնախուճը պէտք եղածն ի գործ դնելով այս պարտքը մէջ տեղէն վերցնէ: Այս է ահա Քաղ. Ժողովոյ առաջարկութիւնը:

ՊԱՌՆԱՍՏԵԱՆ Պ. ԷՅ. — Պէկեան էՖ. իր խօսքին մէջ երկու հարցում կ'ընէ. մէկ մը թէ Ընդհ. Ժողովը կ'ընդունի՞ այսօր այս խնդիրը իւր ատենին մէջ, եւ երկրորդ թէ պարտուց վճարման դարման գտնել ստիպողական է: Այո՛, անտարակոյս ստիպողական է այդ, ուստի եւ պէտք էր խնդիրը Ընդհ. Ժողովին ներկայանար: Եթէ ոսնակոխ կ'ըլլայ Ազգ. Պատրիարքարանի պատիւը պարտուց պատճառաւ, պէտք է ճարը գտնել փութով. ներելի չ'է անոր լուծումը Սահմանադրութեան վերաքննութեանէն ետքի թողուլ, զի ասի երկար կը տեւէ. պարտքը կարելի եղածին չափ շուտով վճարելու է: Գաղղիական առած մը կ'ըսէ թէ՛ ով որ պարտքը կը վճարէ, կը հարստանայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Պարտուց խնդիր մը կայ երեւան եկած եւ անոր լուծման համար արդի պարագայից մէջ ինչ սկզբան որ պէտք է հետեւի, անոր վրայ խորհիլ հարկ է: Պէտք է զիտել Երեմիա Սրբազանին եւ Ատենաբան էՖ. ներուն թէ այս պարտքը չը վճարենք ըսող

մը չը կայ: Խնդիրը երկու կէտի վրայ է. կարծիք մը կայ յանձնախուճ մը կարգելու. Ընդհանուր Ժողովէն այս խնդրոյն համար, եւ ուրիշ կարծիք մը թէ՛ իբր սկզբունք այս խնդիրը հոս ներկայանալու չ'էր:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Նախ Պէկեան էՖ. ի պատասխանելով կ'ըսեմ թէ՛ սկզբունքն արդէն քննված ու որոշված է. իսկ Ապրիլ էՖ. ի գալով կը պատասխանեմ թէ՛ հարկ չը կայ որ այս պարտքին համար Ընդհանուր Ժողովը յանձնախուճ մը կարգէ, այլ պէտք է Արջութիւնը մտածէ անոր վրայ եւ իր վրայ ա՛նու այդ գործը. իսկ եթէ՛ չ'ուզէր այսպէս, յատուկ յանձնախուճ մը դնէ անոր համար: Ա'երեւի թէ Քաղ. Ժողովը բոլորովին վրայէն նետել կ'ուզէ պարտուց խնդիրը:

ԱՊՐՈ Ս. ԷՅ. — (յանսն Գալ Ժողովոյ) Քաղ. Ժողովը երբէք վրան առած չ'է դայն՝ որ այժմ վրայէն նետելու հարկին մէջ գտնվի:

ԽՕՃԱՍՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Պարտուց խնդիրը որ աշխարհի բոլոր ազգաց մէջ կայ, ո՛չ մէկն այսպէս ըմբռնած է. հին պարտք ըսելով ինչ պիտի հասկնանք, ո՞րն է հին պարտքը, չէ՞ մի որ Սահմանադրութեան հաստատութենէն, 1860 թուականէն առաջ եկած Արջութեանց օրով դոյացած է այն: Ազգ մը կառավարութեան ձեւը կրնայ փոխել, բայց պարտքին հինն ու նորը չ'ըլլար, այլ պարտքը միշտ պարտք է:

Արջութիւններ եկան որ Ազգը սնանկացած է ըսին եւ ճակտին սեւ արատ մը դրոշմեցին. զայս խօսքը՝ զխեմ որ սնտուկին մէջ ստակ գտնված ստենն ալ ըսին, եւ վախնալով որ պարտուց վճարմամբ այդ խօսքը ետ առնվի, պարտատէրներուն ստակ չը տուին եւ ըսին թէ մենք ձեր հին առնելիքը չ'ենք ճանչեր. ասկէց դատ այն անձանց հետ յարաբերութիւններն ալ դադարեցուցին: Օրինակի համար, այն հացագործին՝ որ կուգայ հոս եւ հարիւր այսքան հազար դուրուշ կը պահանջէ, յայտնի է թէ՛ հաշիւը մէկ օրուան մէջ չ'է դոյացած. Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը վճարք չ'ընելով այդ պարտքը շատցուցած, եւ այս գուժարին հասնելէ ետեւ՝ յաջորդն եկած նախորդին պարտքը չը ճանչցած եւ հացն ալ ուրիշ հացագործէ առնուլ սկսած ըլլալու է, ինչպէս որ ասանկ ալ եղած է:

Այս երկու անիրաւութիւնները յիշելէ ետքը՝ կու գամ բուն խնդրոյն: Պարտուց խնդիր մը կայ ժողովին ներկայացած, բայց որոշ գուժար

չը կայ, հաշիւ չը կայ, տեղեկութիւն չը կայ: Ենթադրելով թէ այս պարտուց մէկ մասը Հիւանդանոցի ծախքերէն եւ միւս մասն ալ Պատրիարքարանի ծախքերէն դոյացած ըլլայ, քանի որ այսօր Հիւանդանոցը իրեն յատուկ շատ սնտուկ ունի, կ'ըսեմ թէ՛ այդ պարտքերը դոյացած ստենն ո՛չ Տէրութիւնը արդի չափ հանապազօրեայ հաց եւ միս կը շնորհէր Հիւանդանոցին եւ ոչ ալ Հիւանդանոցը հիմակուան չափ եկամուտ ունէր: Այսչափ առաւելութեամբ՝ որ աչքի չը դարնելու աննշան բան մը չ'է, Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը կրնայ այսօր հոգալ իւր պարտքը եւ հոս չը բերել, միայն թէ ըսելու է Հոգաբարձութեան որ պարտուց այսչափը ձեր սնտուկին կը վերաբերի եւ անկից պէտք է վճարվի:

Միւս մասին գալով՝ որ Պատրիարքարանի կեդրոնական սնտուկին կը վերաբերի, թէ եւ Ապրիլ էՖ. կ'ըսէ թէ Արջութիւնը չը կրնար տոկոսօք փոխառութիւն ընել, կը պատասխանեմ թէ՛ վարչութեան մը համար անկարելի պէտք չ'է ըլլայ փոխառութեամբ պարտք վրձարել եւ պարտապահանջները հոս չը բերել: Ա'մեն վարչութիւնք պարտք ունին, չը՞ կայ կառավարութիւն մը որ պարտք չ'ունենայ. բայց երբ առնելիքի տէրերը չը յուսահատին՝ ո՛չ հոս կու գան, ո՛չ մեր երեսին կը պօռան եւ ո՛չ ալ Ազգը կ'անպատուեն:

Մեզի խնդիրն ինչպէս եկաւ. Ս. Պատրիարքը նախորդ նիստին մէջ ըսաւ թէ՛ բաւական է որ այս պարտքը ձեր քրէտոյն ընդունիք, եւ Ազգէն կ'առնեմ կը վճարեմ: Արեւմն կառավարկեմ որ այս որոշումն ընելէ ետքը՝ նորէն դարձնենք խնդիրը Պատրիարքարանին, ուստի որ եկաւ մեզի, առանց վճարման եղանակին միջամտելու. ապա թէ ոչ, կարելի է Ս. Պատրիարքը ըսէ մեզի. ձեր խօսքերն աղէկ են բայց որոշումնիդ դէշ է, ես նուէր կը հաւաքեմ Ազգէն ու կու տամ այս պարտքը: Մենք այսօր վճարմանը համար միայն քրէտ տանք, կ'ուզէ տուրք հաւաքելով վճարէ, կ'ուզէ կըրօնական նուէրի հաւաքմամբ վճարէ, կ'ուզէ օրինաւոր տոկոսով փոխառութեամբ վճարէ, ինչ միջոց որ կ'ուզէ՛ դայն թո՛ղ ի գործ դնէ:

ՄԱԶԱԼՄԵԱՆ Յ. ԷՅ. — Ես այնպէս իմացած եմ թէ տասը տարի առաջ Ազգը պարտք չ'ունի եղեր, հիմայ կը լսեմ որ ըստ ոմանց 6-7 եւ ըստ այրոց 9-10 բեռ պարտք ունի, եւ Արջութիւնն այժմ նեղն ընկած՝ կ'ուզէ ընդունել տայ զայդ պարտքը Ընդհանուր Ժողովին եւ հաւատնութիւն առնուլ անկէ:

Այսչափ մեծագուծար պարտք կայ կ'ըստի, բայց Ազգը երբէք տեղեկութիւն չ'ունի եւ չը գիտէր բնաւ թէ՛ ի՞նչ տեսակ պարտք է այս, ո՞ր թուականէն յառաջ եկած եւ ո՞ր Վարչութեան օրով. երկու տեղեկագրերն ալ ամենեւին չ'են պարզեր այս կէտերը:

Այս խնդրոյն վիճարանութեան մէջ ազգային ուղղութիւնն ալ կը թշնամանովի, բայց քանի անգամ օրինաւոր վարչութիւններ եկան, ինչո՞ւ չը կրցան ազգային տուրք հաւաքել եւ այս պարտքը բառնալ, մինչդեռ Ազգը պատրաստ է միշտ իւր տուրքը վճարելու, եւ ինչպէս Փափագեան էֆ. ըսաւ քիչ մ'առաջ՝ վեց ամսուան մէջ առանց ընդհանուր միջոցներ ձեռք առնելու 30000 զրշ. ստակ հաւաքվեցաւ, միայն 75 զրշ. ի սկզբնական տուրքն ուղղելով ժողովուրդէն, ինչպէս որ հրատարակեալ ցուցակներէն կ'երեւի:

Այդ գումարին մեծ մասը գործով Պատրիարքարան եկող անձինքներէ հաւաքված է, եթէ ընդհանրապէս ուղղակի միջոցներ ի գործ դրվին՝ տարակոյս չը կայ թէ՛ մէկ քանի պատիկն աւելի պիտի գոյանայ:

Ուստի խօսքս վերջացնելով կը յայտնեմ իմ կարծիքս թէ՛ նախ պէտք է այս պարտքն ընդունիլ իր որոշ քանակութեամբը եւ ապա անոր վճարման միջոցներու վրայ խորհիլ: Եթէ խնդիրն այս կերպով չը լուծվի, շատ հաւանական է որ վաղն ալ ուրիշ պարտք մը երեւան ելնէ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես կ'ըստասէի որ օրինաւոր տեղեկագիր մը ներկայանար այսօր մեզի պարտուց խնդրոյն վրայ, եւ պատրաստված էի առաջարկել որ այն տեղեկագիրը քրէի դընելով ընդունինք. բայց հիմայ խնդիրն այս վիճակին մէջ չ'է. Սրբազան Պատրիարք Հայրը ըսաւ մեզի, ճանչցէ՛ք այդ պարտքը ես կը վըճարեմ. Քաղաքական ժողովը կ'ըսէ այժմ, յանձնախումբ մը գրէ՛ք որ ուղղակի տուրքէն զատ ստակ ձարէ եւ այս պարտքը վճարէ. Տնտեսական Խորհուրդն ալ կ'առաջարկէ, ուղղակի արոց հասոյթին կէսը պարտուց վճարման յատկացնել: Ահա երեք տարբեր կարծիք Վարչութեան իր մէջէն, որք պէտք է նախ միաբանին իրենց մէջ եւ ապա խնդիրը բերեն ընդհանուր ժողովին՝ որ կարենայ անոր լուծումը Վարչութեան յանձնել, ըստ որում ներկայ Վարչութեան վրայ կատարեալ վստահութիւն ունի:

ՍԸՎԱՃԵԱՆ Յ. ԷՖ. — Գրեթէ իմ ըսելիքիս

մէկ մասը Փափագեան էֆ. ըսաւ: Խնդիրը յառաջագոյն շատ պարզ էր հոս եկած ատեն. Քաղ. ժողովոյ տեղեկագիրը՝ որ Ս. Պատրիարքէն ալ ստորագրեալ է, կ'առաջարկէր ընդհ. ժողովոյ կողմէն յանձնախումբ մը կարգել, բայց Տնտեսական Խորհուրդը կ'ուզէ իր կարծիքն յառաջ տանիլ, որ բազում արգելք եւ դժուարութիւններ ունի: Կարծեմ թէ աւելորդ է այլ եւս երկար խօսիլ. Ընդհանուր ժողովը կրնայ արտօնութիւն առ Ս. Պատրիարք Հօր՝ իր ընտրութեամբ յանձնախումբ մը կազմելու եւ անոր հետ վճարման գործը կատարելու:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ազգային պարտուց խնդրոյն վրայ խօսելու ժամանակնիս կարծեմ խիստ սուղ է, այսպիսի որոշումներն երկարած գելը միշտ մնասակար կ'ըլլայ. եթէ ժողովն այսօր որոշէ այս խնդիրը, անմիջապէս գործի կ'ըսկսվի եւ մինչեւ գալ շարթու գոնէ 1000 զրշ. ժողովելով պարտուց կը վճարվի. մենք չ'ենք կրնար երբէք մէկ տարուան մէջ 5-600000 զրշ. հաւաքել, ես Տնտեսական Խորհրդականութեան պաշտօնը քանի անգամներ վարելով դիտած ու փորձած եմ որ, տարին 300000 զրշ.էն աւելի չը կրնար հաւաքվիլ: Պարտուց ստիպողական մասը 200000 զրշ.ի չտի է որ կը ծանրանայ Պատրիարքարանի վրայ. ուստի կը խնդրեմ որ առանց յապաղելու այս խնդրոյն լուծումը, որոշվի թէ՛ Վարչութիւնը յանձնախումբ մը կազմէ, որ ուղղակի արոց հասոյթէն պարտուց յատկացեալ բաժինն առնէ եւ վճարքները կատարէ:

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԿ. — Գոհ ըլլանք եթէ պարտապահանջներն այնչափ նեղեցին Պատրիարքարանը, որ վերջապէս Ազգն իմացաւ թէ պարտք ունի եղեր: Սկզբունքի նայելով լաւագոյն է արոց վրայ վստահիլ քան նուէրի, արդէն նուէրն առ հասարակ նուագելու վրայ է, ըստ իս պէտք է կարելի եղածին չափ քիչ գործածել զանի, որ բոլորովին չ'սպառի. ուստի կ'առաջարկեմ որ ժողովրդէն նուէր անունով ստակ չը հաւաքվի, այլ ուղղակի տուրք ուղղվի: Ես կարծեմ թէ պարտապահանջներն ալ աւելի գոհ պիտի ըլլան տեսնելով որ, Ազգը ընդհանուր տուրք կը հաւաքէ եւ իր պարտքը անով պիտի վճարէ:

Տ. ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. — Առ նուազն տասներորդ անգամն է այս որ տուրքի, հանդանակութեան վրայ կը խօսվի այս ընդհ. ժողովոյ մէջ. շատ մը յանձնաժողովներ եւ տեղեկագրեր տեսինք ու դեռ եւս ընդհանուր միջոցի մը գործադ-

թութեան ձեռք չը դարկինք. Թերեւս այս ընթացքով առանց գործնական արդիւնք մը յառաջ բերելու՝ միայն վիճարանելով պիտի անցնենք մեր ժամանակը, զի վիճարանութիւնը յանձնուս կ'երկարին Ա թիւին պէս: Երկու գրաւոր առաջարկութիւն ներկայացած են այսօր մեզի, կ'առաջարկեմ որ նախ Քաղ. ժողովոյ առաջարկութիւնը քրէի դրվի եւ մէկը կամ միւսն ընդունվի:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Ես ալ պիտի առաջարկեմ Ներսէս Սրբազանի պէս՝ որ քրէի դրվի, բայց Տնտեսական Խորհրդոյ առաջարկութիւնը:

Քրիստոստուր էֆ. յանուն Տնտեսական Խորհրդոյ ըսաւ որ պարտուց ստիպողական մասը 200000 զրշ. ի չափ է, եւ թէ իրենց տեղեկագրին մէջ նշանակվածին համեմատ՝ կեղրոնական տուրքն ընդհանրացնելով անոր կէսը պարտուց վճարման յատկացնելը բաւական է, որ յանձնախումբի մը ձեռք կրնայ կարգադրվիլ: Քաղաքական ժողովն ալ կ'ըսէ արդէն թէ այս տարուան ելուժուտը կարգի դրված է: Ուստի Տնտեսական Խորհրդոյ առաջարկութիւնը քրէի դնելու վերջացնելու է:

ՊԵՂԵԱՆ Ք. ԷՖ. — Կը ցաւիմ որ իմ խօսքերս չարաչար մեկնվեցան, ես չ'ըսի թէ Ազգին պարտքը չը վճարվի, այլ դիտեցի թէ առանց կարգաւորեալ պիւտձէի մեր ընելիք որոշումն անհիմն կ'ըլլայ: Կ'առաջարկեմ որ Ընդհանուր ժողովը արդի պարագայից մէջ վրան չ'առնէ այս ծանր խնդիրը եւ Վարչութեան յանձնէ առժամանակեայ կերպով պէտք եղածը գործադրել:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Թոյլ տուէք քիչ մ'ալ ես խօսիմ, Քրիստոստուր էֆ. կ'ըսէ թէ ազգային պարտուց մէջ 200000 զրշ. ն է ստիպողական վճարելի. այդպէս չ'է: Եթէ պարտատէրներուն մէկ մասը երթալ գալէ յուսահատած դադարեր են այժմ Պատրիարքարանը ձանձրացնելէ, երբ լսեն թէ Ազգն իւր պարտքերը վճարել սկսած է, ամենքն ալ պիտի ըսկըսին Պատրիարքարանի դուռը գալ:

Տնտեսական Խորհրդոյ տեղեկագիրը կ'ըսէ նաեւ թէ՛ ժողովրդէն 75 զրշ. ի տուրքն հաւաքելով կէսը պարտուց յատկանայ, կէսն ալ կեղրոնական ծախուց. բայց այս եղանակով ազգային պարտքը հազիւ եօթ տարուան մէջ կրնայ վճարվիլ:

Մեր եկեղեցական Հարց մէկն ալ նուէրն աշխարհէս ջնջվելու վրայ է կ'ըսէ. բայց դիտ-

նալու է թէ՛ քանի որ քրիստոնէութիւն կայ աշխարհի վրայ, նուէրը չը կրնար վերնալ, մանաւանդ թէ Հայոց ազգը երբէք նուէրը չ'է խնայած. ժողովուրդը եկեղեցւոյ մօտին ու ձէթին համար աւելի սիրով ստակ կու տայ:

Ես շատ չ'որհակալ եմ Օգոսէն էֆ.էն որ իմ առաջարկութիւնս խիստ լուրջ մտնեց, Ընդհանուր ժողովոյ համար երկար գործ է պարտուց քննութեան ու վճարման եղանակին դրադիլ: Գուք այդ պարտքին վճարումն որոշեցէ՛ք, բաւ է. ես կ'ապահովեմ որ Հայոց Ազգն իր պարտքը պիտի վճարէ: Գիզված պարտքերու համար կրօնական անուններով աւելի դիւրաւ կրնայ ստակ հաւաքվիլ երբեմն:

(Յոս. Գոս. Լ. Է. Ե. Ե. Ե. Ե.)

ԱՏԵՆԱՐՊԵՐ ԷՖ. — Պահ մը խնդիրը չվոթութեան մէջ ընկաւ եւ թիւերու հետ խաղալ սկսանք, բայց Նախագահ Սրբազանին խօսքերը մասամբ իւր պարզեցին զայն:

Պարտուց խնդրոյն համար երկու տեղեկագիր կան այս սեղանին վրայ. ինչպէս ժողովը տեղեկացաւ արդէն, ասոնց երկուքն ալ Վարչութեան կողմէն հաղորդված են, բայց խիստ տարբեր առաջարկութիւններ կը բերեն մեզի. ես անոնց վրայ չ'եմ խօսիր, զանոնք մէկ կողմ կը դնեմ ու խնդրոյն բուն ծագմանը դիմել կ'ուզեմ:

Նախընթաց նիստին մէջ Նախագահ Սրբազանն ըսաւ մեզի. ազգային պարտուց վճարումն ստիպողական խնդիր մըն է, ես անոնց բարձմանն արդէն ձեռնարկած բայց զանազան պատճառներով արգիլեալ եմ, այս պատճառներուն մէկ գլխաւորն ալ իմ ձեռնարկութեանս համար Ընդհանուր ժողովոյ հաւանութիւնն ի պաշտօնէ չ'առած ըլլալս է. ուստի արտօնութիւն տուէ՛ք ինձի այդ պարտքը բառնալու. ես ժողովրդեան առատաձեռնութեանը կը դիմեմ եւ կը վերցնեմ զանի:

Բայց որովհետեւ Սրբազան Նախագահը Սահմանադրութեան վերաքննութեան վիճարանութեանը միջոցին եւ անկէ հետեւցնելով այս առաջարկութիւնն ըրաւ, եւ ժողովը չ'էր կրնար յանակակալա մէջ բերված նոր եւ տարբեր խնդրով մը զբաղիլ, խնդրվեցաւ Գործադիր Խնամարարութեանը կողմէն Գործադիր Խնամարարութեանը միջոցին եւ անկէ հետեւցնելով այս առաջարկութիւնն որ իւր Նախագահին առաջարկած խնդրոյն վրայ ճիշդ եւ որոշ տեղեկագիր մը բերէ, օրինաւորութեան համար. բայց չ'է թէ խնդիրը չ'իթող գրութիւններ կամ այլ եւ այլ առաջարկութիւններ:

Հիմայ Ընդհանուր ժողովն ի՞նչ պէտք է ը-

նել . ըստ իս՝ Աարչութեան առած երաշխաւորութեանը վրայ այս պարտքն ու անոր վճարվելու ստիպողականութիւնը ճանչել , առանց մանրամասն քննութեանց մէջ մտնելու , եւ իւր քրէտօնը արածութիւն տալ Աարչական ժողովին ու անոր Արքազան Նախագահին՝ այդ պարտքը վճարելու համար պատշաճ եւ օրինաւոր դատած միջոցներն ի գործ դնելու :

Կարծեմ թէ՛ խնդիրն այսպէս միայն իւր պարզութեան եւ ուղղութեան մէջ կրնանք պահել . զի եթէ պարագաներուն մտնենք խել մը կնճիւղներ կ'ենեն մեր դէմ , եւ կարելի է յայնժամ լուծում մ'ալ չը կարողանանք տալ խնդրոյն :

Արդ ասոր հակակարծիք եզոզները աւելի ի՞նչ կ'ուզեն եւ կրնան պահանջել Ընդհանուր ժողովէն . մի թէ ժողովն այս պարտուց քննութիւնն ընէ , գումարները ճշդէ , յանձնախումբի մը պաշտօնն ստանձնէ : Իսկ եթէ հիմնական ու լուծումն անպատճառ Ընդհանուր ժողովէն արվելու կարօտ խնդիր մը կ'ըմբռնեն զայն՝ ու ըստ այնմ յուզել կ'ուզեն , պէտք է հետաետեսն որ յայնժամ մեր ձեռք առած գործը ազգային ելուձոյց կամ կեդրոնական տուրքի խնդիրն եղած պիտի ըլլայ , զի ասոնք պիտի ծագին անվրէպ մեր վիճարանութենէն . այն ատեն ես ալ իրաւունք կ'ուտամ ու համամիտ եմ այն կարծեաց թէ՛ առանց օրինաւոր պիւտճէի հաստատութեան ելմտական եւ հաշուական ամեն անօրէնութիւն անհիմն է եւ թերի :

Կէտ մը կայ արդարեւ նկատողութեան արժանի որ ամանց ուշադրութիւնը դրաւեց , այն թէ՛ Աարչութիւնն իր մէջ համակարծիք չ'է այս խնդրոյն համար . բայց ասոր պատճառը ծանօթ է արդէն եւ սա . Քաղաքական ժողովն իր կազմութեան ատեն պարտուց խնդրոյն հոգըն իր վրայ չ'առնելու պայմանաւ պաշտօն ստանձնեց , իւր պաշտօնավարութիւնն առանց այդ խնդրոյն ձեռք դարնելու շարունակեց եւ այնպէս կ'ուզէ վերջացնել . իրաւունք կրնար ունենալ ինք այսպէս ընելու , ուստի եւ չը պիտի կրնայ այժմ ի հարկէ Տնտեսական Խորհրդոյ առաջարկութեան համեմատիլ , որ պարտուց խնդրոյն ամբողջ ծանրութիւնը գործադիր իշխանութեան վրայ կը բեռնաւորէ :

Ներկայացեալ տեղեկագիրք մասնեցին զայս անհամաձայնութիւնը : Սակայն միթէ հարկ անհրաժեշտ կա՞յ Ընդհ. ժողովին , Աարչութեան տարակարծիք մասերը համաձայնեցնելու համար , խնդրոյն վրայ իւր ատենանին մէջ քրն-

նութիւն բանալու . մանաւանդ թէ՛ պաշտօնապէս ի՞նչ յարաբերութիւն ունի Ընդ. ժողովը Տնտեսական Խորհրդին հետ :

Ոմանք ուղեցին պիտնալ թէ այդ պարտքերը որ թուականին եւ որ վարչութեան օրով գոյացած են , ի՞նչ պատճառաւ յառաջ եկած եւ մինչեւ հիմա չ'են վճարված . բայց ես համառօտիւ կը պատասխանեմ թէ՛ ի բաց առեալ մասնաւորութիւնները՝ Ազգն այս պարտքն ունեցեր է վասն զի սահմանադրական դրութեան տակ մտեր է . այժ՝ ազգային Աարչութիւնը Սահմանադրական եղեր է , իւր օրինաւոր պէտքերը ճանչեր եւ այն պիտոյից սկզբնականները հոգալու համար ծախուց գումար բացեր է , դէմն ունելով ազգային տրոց յոյսը՝ որ երբէք օրինաւորապէս չ'է գործադրված . եւ եղած ծախքերը չ'է դիմաւորած :

Մեծ իրաւունք ունէին ըսողները թէ՛ իւրաքանչիւր ազգային վարչութեան ծախուց մասնակցելու պէտք չ'է գծուարի , թէ ժողովըրդեան մէջ տուրք տալու վարժութիւնը պէտք է ընդհանրանայ : Ասկից կը հետեւի եւ ճշմարիտ է թէ՛ ազգային հանգանակութեան օրինաւորապէս հաստատվին ու ընդհանուր գործադրութեան շրջանի մէջ մտնելը մեզի համար կենսական խնդիր է . բայց այդ ալ մեր ձեռք առած վերաքննութեան գործին մէջ պիտի կրնայ կատարվիլ հիմնական կերպով :

Վերջացնելով խօսքս կ'առաջարկեմ որ , առանց այս կէտերը այժմ յուզելու եւ Ս. Նախագահն իր առաջադրութեան մէջ արգիլելու , որ օգտակար արդիւնք մ'արտադրելու հաւանականութենէն զուրկ չ'է , ճանչենք այդ պարտքը եւ արտօնութիւն տանք գործադիր իշխանութեան՝ անոր վճարման միջոցներուն ձեռնարկելու իւր պատասխանատուութեան տակ :

( Զ-յետրէ և Բ-րճր-ն-ն +ը-է և Է-դրէն ) :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Որոշեալեւ ամբողջ պարտուց վճարմանը բաւական գումար մէկանց ժողովել անկարելի է , այս տարուան մէջ ստիպողական վճարելի 200000 դր. ի չափ պարտք կայ ըսի . բայց երբ ժամանակը դայ հետըզհետէ ամենքն ալ պիտի վճարվին անշուշտ :

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Յ. ԷՖ. — Մեր բաղձանքն է Ազգին պարտքը փութով բաձնալ վրայէն եւ անանկութեան արատը՝ որոյ համար ակնարկութիւն եղաւ՝ անոր ձակտէն սրբել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կ'աղաչեմ ատենաբանէ ֆ. ները որ պարագաներու չը մտնեն . բաւական խօսվեցաւ այս խնդրոյն վրայ եւ քրէտի

դրվելու ժամանակը մօտեցաւ , ուստի առանց խնդրէն շեղելու ամիտի կերպով կարծիքնին յայտնել կը հրաւիրեմ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Քիչ մ'առաջ Սրբազան Պատրիարք Հայրը ժողովիս մէջ Քաղաքական ժողովոյ տեղեկագիրն ստորագրած ատեն կարծեցինք թէ՛ Պատրիարք եւ Աարչութիւն համամիտ են եւ մէկտեղ պիտի հաւաքեն պարտուց վճարվելու ստակը . բայց Ս. Պատրիարքի այժմեան առաջարկութիւնը գործադիր իշխանութենէն անկախ կերպով հաւաքելու երեւոյթ մ'աւնի , եւ այն ալ անորոշ կերպով , այսինքն չը դիտցվիր թէ՛ ո՞րչափ ժամանակի մէջ պիտի վճարէ այդ պարտքը եւ ի՞նչ եղանակով հաւաքում պիտի ընէ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ. — Կարծիք մը կայ որպէս թէ առաջարկած ըլլամ , Աարչութենէն անկախ կերպով պարտուց վճարման ձեռնարկու ըլլալ . բնաւ երբէք , ես Քաղ. ժողովէն չ'եմ բաժնվիր , միշտ անոր հետ պիտի խորհիմ իմ ընկիւղներուս վրայ եւ անոր հետ պիտի գործեմ : Փախաղեան է ֆ. խնդրեց գիտնալ թէ Ազգին պարտքը ո՞րչափ ժամանակէն պիտի բաձնամ . ասոր պատասխանելու համար գիտնալ հարկ կ'ըլլար թէ՛ ո՞րչափ ատեն սահմանված է ինձ Ազգին Պատրիարքութիւն ընելու :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Ես կ'առաջարկեմ որ երկու յանձնախումբը դրվի՝ մէկը պարտուց եւ միւսն ելուձոյց խնդրոյն համար , որք վաղ ընդ փոյթ իրենց տեղեկագրերը պատրաստելով Ընդհանուր ժողովոյ ներկայացնեն :

( Իճ-ն-ն և շ-ն-ն Գ-ն-ն-ն-ն )

Ատենը կը դադրի եւ ժողովականք պահ մը հանդիտ առնելէ հաքը կրկին կը բացվի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բացված խնդրոյն վրայ խօսիլ ուղղոյն ամենքն ալ իրենց կարծիքը յայտնեցին : Խնդրոյն գլխաւոր կէտը Քարծրաչորհ Նախագահին առաջարկութիւնն է , զոր նախընթաց նիստին մէջ ըրաւ . եկած տեղեկագիրները չ'են պատասխաներ անոր պարտութեանը , գործադրական խառն պարագաներ կը պտրտենակեն : Նախագահ Սրբազանը իր առաջարկածն այսօր ալ կը կրկնէ ըսելով ազգային դիզված պարտք մը կայ , Ընդհանուր ժողովն արտօնութիւն տայ իրեն որ Աարչութեան հետ խորհելով զայն վերցնելու աշխատի : Երեստ պարզ է ասի , եւ ասի՝ միայն է ժողովէն ուղղվածը եւ ո՞չ այլ ինչ :

Ատենախօս է ֆ. ներէն ամանք կարծիք մը դրին յերեւան թէ՛ արդեօք այս պարտքերն ինչո՞ւ գոյացած են եւ մեր ժողովին կը վերաբերին թէ՛ ոչ , եւ ասոնց քննութեանը մտնելու առաջարկեցին :

Ասով ըսել կ'ըլլայ թէ՛ երկու առաջարկութիւն կայ քրէտի դրվելու . մէկը այս ետքինը եւ միւսը Քարծրաչորհ Նախագահին առաջարկութիւնը :

Դիւանին պարտքն է յիշեցնել թէ՛ գործադրական մասանց մէջ չը կրնար մտնել Ընդհանուր ժողովը . կանոնէ դուրս է իրեն համար քննութեանց ելնել . ասոնք գործադիր իշխանութեան կը վերաբերին , մանաւանդ որ ժողովը մեծ վստահութիւն ունի Աարչութեան վրայ :

Դիւանին կարծիքն է Ս. Պատրիարքին առաջարկութիւնը քրէտի գնել եւ ընդունիլ , զի միւսը պարագաներու կը վերաբերի :

Դիւանին կարծիքը ժողովին յայտնելէս ետքը՝ խօսքը Ի. թիւ ձեան է ֆ. ին կուտամ որ ուղած է եւ դեռ չ'է խօսած այս խնդրոյն վրայ . անկէ ետքը քրէտի պիտի գնեմ :

ԻՌԹԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Սրբազան Նախագահին ժողովոյս բերած խնդիրը ազգային տուրքի վրայ կը դառնայ , որոյ որոշումը Ընդհ. ժողովոյ վերապահալ է , եւ այս պատճառին համար զանի հոս բերաւ որ հաճութիւն ստանայ :

Մինչդեռ երեսփոխանական ընտրութեանց մասնակցողներէ 73 զըշ.ի եւ շահու տէր անձանցմէ 23 զըշ.ի տուրք մը կը հաւաքվի , կը տեսնենք որ Ս. Պատրիարքը կ'ուզէ ասոնցմէ զատ տուրք մը հաւաքել : Սահմանադրութիւնը ընդհանուր տուրք օրինադրած է եւ գործադիր իշխանութիւնն ու Պատրիարքը կրնան հաւաքել զայն ըստ Սահմանադրութեան . իսկ ընդհանուր տուրքէն զատ՝ ուրիշ անունով տուրք հաւաքելն անպատեհութիւն է : Կ'առաջարկեմ որ ընդհանուր տրոց աստիճաններն որոշվին եւ անոր գործադրութիւնը Աարչութեան յանձնվի : Սահմանադրութեան մէջ ընդհանուր տուրքը դրված եւ հաստատված է , միայն թէ անոնց չափը , աստիճանը եւ բաշխման եղանակը չ'է որոշված . զասոնք որոշելն ալ Ընդհ. ժողովին գործն է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիտել կու տամ Ի. թիւ ձեան է ֆ. ին թէ Սահմանադրութիւնը բան մը չ'է հաստատած տուրքի նկատմամբ . միայն տուրք մը պիտի հաստատվի ըսած է կարողութեան վրայ : Դուք ազէկ գիտէք թէ՛ այս ընդհանուր



մէկ խօսքը ո՛րքան բան կը պարունակէ . ո՛րն է կարողութեան չափը եւ ի՛նչ եղանակով պիտի բաշխվի . այս կէտերն անորոշ թողված են եւ ասոնց որոշումն ընդհանուր ժողովին գործն է , չ'եմ ուրանար , բայց օրն այսօր չ'է . հանգանակութեան մեծ խնդիրը չ'է այսօր հոս բացվածը , զոր Ազգային ժողովը տաս տարիէ ի վեր դեռ չ'է կրցած յաջողիլ օրինաւոր չըջանի մը մէջ դնելու : Վարչութեան այսօր մենէ խնդրածը՝ ընդհանուր հանգանակութեան հաստատութիւնը չ'է , այլ առժամանակեայ միջոցներով հին պարտք մը վերցնելու արտօնութիւնն է , պարտք մը մանաւանդ զոր ստիպողական կը համարի : Աւստի ձեր ըրած առաջարկութիւնը ճիշդ բացված խնդրին վրայ չ'ըլլալով չը կրնար երրորդ առաջարկութիւն մը համարվիլ :

**ՓՈՒՍՏԱՅԵԱՆ Ս. ԷՖ.** — Ատենապետ էֆ. կ'առաջարկէք որ Սրբազան Պատրիարքն ու Վարչութիւնը անօրինակ որ եւ է առժամանակեայ կերպով . բայց ես համամիտ չ'եմ ընաւ որ սահմանադրական դրութեան պատճառաւ գոյացած պարտքը հակասահմանադրական եղանակաւ վճարվի . որ եւ իցէ առժամանակեայ միջոցով պարտք վճարելը մէկ անգամի համար ալ ըլլայ , դարձեալ ապօրինաւոր է եւ քննարկաբար ուղղակի արոյ . ուստի կը բողոքեմ ձեր այդ առաջարկութեան դէմ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Դուք ազատ էք համամիտ չ'ըլլալու , ինչպէս ուրիշներն ալ ազատ են ձեզի համար չ'ըլլալու :

**ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ.** — Սրբազան Նախագահին ընելիք հաւաքման արգելք ըլլալ չ'ենք ուղեր , մանաւանդ թէ կը գովենք իւր ջանքը . բայց մենք չ'ենք կրնար ո՛չ այն օրինաւորութիւնէ հետի տեղեկագրաց վրայ քրէէ տալ եւ ո՛չ ալ Սահմանադրութենէ դուրս ազգային տուրք հաստատել . ասի ծանր խնդիր է , ինչպէս որ վիճաբանութիւնը քանի կ'երկարենք այնչափ ալ ծանրութիւնը կ'զգանք , ուստի ընդհանուր ժողովն այս խնդիրը թող Վարչութեան յանձնէ ու ինք Սահմանադրութեան վերաքննութեանն զբաղի եւ ոչ թէ միջանկեալ խնդրոց :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Ձեր այդ խօսքին իմաստը նոր բան մը չ'է , այլ Ս. Պատրիարքին առաջարկութիւնն է . եւ այն է Գիւտանի ալ ընդունած կարծիքը՝ ինչպէս քիչ մ'առաջ բացատրեցի :

**ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ.** — Առաջարկութեանց մէջ միութիւն կայ , մէկը Ս. Պատրիարքինն

է՛ որ կ'ուզէ արտաքոյ կարգի նուէր հաւաքելով Ազգին պարտքը վճարել . ուրիշներ ալ կ'առաջարկեն որ սահմանադրական դրութեամբ տուրք հաւաքվի : Ես կ'ըսեմ որ ո՛չ այս եւ ո՛չ միւսը՝ այլ Տնտեսական Խորհրդոյ տեղեկագիրը քրէէի դնենք եւ ընդունինք դայն :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Այս ալ նոր առաջարկութիւն մը չ'է . Վարչութեան ըրածին մէկ մասն է եւ Սրբազան Նախագահին առաջարկութեան մէջ բովանդակեալ կը համարվի . ըստ որում կը խնդրէ որ Վարչութեան արտօնութիւն տրվի իր յարմար դատած եղանակաւ Ազգին պարտքը վճարելու , եւ քանի որ Վարչական Խորհուրդը ժողովոյ վստահութեանն ու համարմանն արժանաւորութիւն ունի , այս է լաւագոյն եղանակը : Վասն զի եթէ պարագաներուն մանենք , ընդ երկար կը հոգնինք այս միջանկեալ խնդրոյն որոշում տալու . համար եւ չ'ենք կրնար յաջողիլ . այլ այս վիճաբանութիւններէն հանգանակութեան ծանր խնդիրը կը ծագի կամայ եւ ակամայ , որ ինչպէս ըսի Սահմանադրութեան հաստատութենէն ի վեր օրինաւոր գործադրական լուծում մը չը կըրցաւ ստանալ , որն որ յուսալի է գոնէ այս անգամ վերաքննութեան մէջ :

**ՓՈՒՍՏԱՅԵԱՆ Ս. ԷՖ.** — Ատենապետ էֆ. գիտէ՞ք ձեր այդ տուած բացատրութեամբ ինչ կ'ընէք , մեծ հարուած մը կ'իջեցնէք կեդրոնական սնտուկին , ուր սկսած է քիչ շատ ստակ մտնել ուղղակի տուրքէ . մի ըսէք որ տուրքը գործադրութեան չըջանի մէջ չ'է , գոնէ՛ նոր սկսած է գործադրվիլ ըսէք . ապա թէ ոչ իրաւունք պիտի ունենամ վաղը իմ պարտքս 75 զըշը չը վճարելու : Նախորդ Երեսփոխանական ժողովին մէջ ալ անցան այս խօսքերը եւ այդ պատճառաւ Ազգէն տուրք չը կրցաւ հաւաքվի . դուք երկար ծրագիրներ ներկայացուցիք այն ատեն , եւ այժմ ալ հանգանակութեան ընդարձակ դրուխ մ'ունիք , զայն պաշտպանելու համար այդ ճամբաներուն մէջ կը մտլորիք :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Այդ բաժնեկրող պատասխանն ինձի եւ ինձի՛ միայն կը վերաբերի . Նախ եւ առաջ՝ նախորդ երեսփոխանութեան բառը՝ որ ստէպ կը լսվի ձեր ըրնէն , սխալ է մեծ եւ անտեղութիւն մերժելի :

(**ՓՈՒՍՏԱՅԵԱՆ ԷՖ.** — Դուք չտկեցէ՛ք) :

Այո՞ ժողովը կը չտկէ եւ իսպառ կը մերժէ , զի այս երեսփոխանութիւնը նախորդ չ'ունի :

երբէք չ'է լուծված . իր հաստատութենէն մինչեւ ցայսօր չարունակութիւն է մասնակի վերանորոգմամբ , այսինքն վախճանելոց եւ հրաժարելոց տեղը մէկ կողմէն լցվելով , Դուք՝ որ նախորդ երեսփոխաններ ըսելով քննադատել կ'ուզէք այս ժողովին անդամները , ըսէ՛ք մեզի ո՛ր օրէն կ'ըսկսի ձեզի համար նոր երեսփոխանութիւնը . հարկաւ ձեր հոս մտած օրէն պէտք է գնէք թուականք , բայց անի ձեր թուականք կ'ըլլայ եւ ոչ թէ ժողովին . բայց դիտցէ՛ք որ դուք որ կը խօսիք , նախորդ էք ըստ ձեզ այն տասներկու երեսփոխանաց համար որք այսօր իսկ անգամ մտան այս ժողովին . եւ դեռ ուրիշներ ալ պիտի գան , որք կու գան կը խառնովին երեսփոխանութեան ծոցը եւ մէկ մարմին կը կազմեն : Եթէ իւրաքանչիւր անգամ ձեզի պէս խօսնէր եւ իր մտած օրէն առաջ եղած դործողութիւնները նախորդ երեսփոխանութիւն վերագրելով խօսէր հոս , ինչ խառնափնդոր վիճակի մէջ կ'ընկղմէր երբեմն ժողովին մէջ դարձած խօսքերուն իմաստը , զի իւրաքանչիւրին համար պէտք կ'ըլլար գիտնալ իւրաքանչիւրին մտած օրին թուականք , նոյն թուականքն ստաջ գանձող երեսփոխանաց անունները եւ միանգամայն նոյն թուականքն ետքը մտնողաց անունները , ի բաց ասնելու համար գոնէ այս ետքիները այն եղած քննադատութենէն :

Կը ցաւիմ այս միջանկեալ խօսքերը խօսելու պարտաւորեալ ըլլալուս , բայց մէկ անգամ ընդ միշտ այս դիտողութիւնը պէտք էր՝ գոնէ Գիւտանի կողմէն՝ այս բարձր գործածողներուն : Գալով հանգանակութեանց ծրագիրներուն , պատասխանս սա է թէ այժմ արժան չ'եմ համարիլ պատասխանելու :

(**Եւր մը Եւրպէր + Եւ Եւ Եւ**)  
 Աւստի հիմա խնդիրը վերջացելու համար , Սրբազան Նախագահին առաջարկութիւնը՝ որ առաջինն է եւ միանգամայն պարզ՝ քրէէի կը գնեմ :

Խնդրոյն քրէէի դրվելուն վրայ ստիպմամբ խօսք ուղեւու ձայներ կը բարձրանան , որոց Ատենապետ էֆ. դարձեալ խօսք կու տայ կարգաւ :

**ԽՈՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.** — Սրբազան Նախագահին առաջարկութեան այն մասը՝ թէ պարտք կայ ազգային եւ պէտք է վճարվի , ամեն ոք կ'ընդունի , բայց երբ առաջարկութեան գոյն

կ'առնէ , ճշմարտութիւնը կասկածի կ'ենթարկէ : Օրինակի համար ես մարդ եմ անկասկած , բայց երբ իմ մարդ ըլլալս ընդունելու համար ելնեն քրէէի դնեն , մարդկութիւնս կասկածելի եղած կ'ըլլայ . ուստի ինչպէս որ ասանկ բան մը չը կրնար քրէէի դրվիլ , նոյնպէս ալ Ս. Պատրիարքին այդ ըսածին համար չ'ենք կրնար քրէէ տալ : Լսկ վճարման միջոցը երեք գոյնով ներկայացաւ մեզի , առաջարկողք ամենքն ալ գործը իրարու վրայ կը նետէին . զայս ալ այս վիճակին մէջ չ'ենք կրնար քրէէ տրկել : Պիտե՞էի խնդրին ալ չ'է կարելի քրէէի գնել , զի դեռ պիտե՞է չը կայ պատրաստված :

Հիւանդանոցի Հոգաբարձութեան ատենապետ Աննեքերիմ էֆ.ին հետ խօսք անցաւ եւ ըսաւ . թէ՛ յանուն Հիւանդանոցի առնված բոլոր ստակները մեզի թող տան նուէր հաւաքելու արտօնութեան հետ , Հոգաբարձութիւնը պատրաստ է Ազգին ընդհանուր պարտքը՝ հին եւ նոր միացնելով վրան ասնելու . եւ զանի մէջ տեղէն վերցնելու :

Աւստի ես կ'առաջարկեմ որ քրէէի դնելիք խնդրին ըլլայ , քննել թէ՛ այդ պարտքը ո՛ր Վարչութեան օրով եւ ինչպէս գոյացած է . եւ եթէ այն ինչ Վարչութեան ապիկարութիւնն է եղած պատճառ , այն ապիկար Վարչութեան համար դատապարտութեան քրէէ տալ : Երբ այսպէս չ'ընենք , ճշմարտութիւններն սորոնհար ըրած կ'ըլլանք , որ վտանգաւոր իսկ է , եթէ կ'ուզէք ամփոփելով իմ առաջարկութիւնըս գրով ներկայացնեմ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Օգտէն էֆ. իրաւացի խօսեցաւ իր խօսքին առաջին մասին մէջ , բայց կարելի չ'է խնդիրը ընաւ քրէէի չը գնել . վասն զի մեզի եկած , խնդրոց կարգը մտած եւ վիճաբանութեան տակ ընկած է . քրէէն զատ ուրիշ դուռ չ'ունինք որմէ ճամբենք ու դուրս հանենք խնդիրը ժողովէն : Այս ըմբռնմամբ անգամ՝ դարձեալ քրէէի գնել կը հարկադրինք , բայց սա կէտը՝ « քրէէ գնել կամ չը գնելու հարկաւորութիւնը » : Արով նոյն բանն ըրած կ'ըլլանք եւ մեր քրէէին արդիւնքը խնդրոյն ընդունելութիւնը կամ մերժումը կ'ենթադրէ : Այսպէս կ'ըմբռնէ Գիւտանը :

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՖ.** — Օգտէն էֆ. կ'ըսէ թէ Աննեքերիմ էֆ. ի հետ խօսեր եւ նա ալ ըսեր է թէ՛ Հիւանդանոցի սնտուկը պատրաստ է Ազգին պարտքը վրան ասնելու , եթէ . . .

Ատենադետ էֆ. կ'ընդմիջէ զատենախօսք, ազգարարելով թէ այդ խօսքերը խնդրէն զուրս մասնաւոր պարագաներ են :

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Ընդհանուր ժողովը չը կրնա՛ր թոյլ տալ որ օրինաւորութենէ զուրս տուրք հաւաքվի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ըստ Սահմանադրութեան պէտք է ստակ հաւաքվի Ազգէն, եւ ոչ թէ անոր հակառակ եղանակաւ :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՖ. — Սրբազան Նախագահի առաջարկութիւնը արտաքոյ կարգի միջոցաւ ստակ հաւաքելու վրայ է :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Ի՛նա՛ւ երբէք. ես առաջարկութիւն մը բերի ժողովին, եւ եթէ չ'ընդունիր, աւելորդ է չարաչար մեկնել զայն. ես առաջարկութիւնս ետ կը տանիմ եւ Տընտեսական Խորհրդին հետ իրաւախոհ կ'ըլլամ. հարկաւ Սահմանադրական սկզբանց համաձայն եղանակաւ եւ Վարչութեան գործակցութեամբը պիտի ձեռնարկեմ հաւաքման :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ ԷՖ. — Երբ Սրբազան Պատրիարքն այսպէս կը յայտարարէ եւ այս կերպով վիճարանութիւնը դադրեցնել կ'ուզէ, ես այլ

եւս հարկ չ'եմ համարիր խօսիլ :


ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կ'երեւի թէ Սրբազան Նախագահին առաջարկութիւնը սխալ ըմբռնած են ոմանք. իր միտքը սա է պարզօրէն, որոչեցէ՛ք թէ այս պարտքը տրվելու է, իսկ եղանակին վրայ մի՛ մտածէք. դուք այնքան երկարեցիք որ ես պիտի պարտաւորիմ առաջարկութիւնս ետ առնուլ :

Դիւանն անաւասիկ սա պէս կը ձեւակերպէ Սրբազան Հօր առաջարկութիւնը. « Ազգային պարտուց վճարման համար արտօնութիւն տալ գործադիր իշխանութեան՝ իր արժան եւ օրինաւոր դատած միջոցներովը ստակ հաւաքելու » : Զայս առաջարկութիւնը քրէի կը դընեմ :

Ժողովը մեծագոյն մասամբ զայս առաջարկութիւնն ընդունելով, վերջ կու տայ պարտուց խնդրոյն :

Ատենը կը գոցվի ժամը 10 1/4 ին :

ՓՈՒԱՆԱԿ ԱՏԵՆԱՊԵՏԻ                      ԱՏԵՆԱՊՊԻՐ  
ՌՈՒՍԻՆԵԱՆ    Յ. Հ. ՄԷՐԵՒՄ-ԳՈՒՎԻ



ՅՈՒՐ Ե ՄԻ

ՔԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

Այս քաղաքում հաստատված է Քաղաքացիական Գրասենյակը, որտեղ կարելի է ստանալ քաղաքացիական փոստի և այլ փոստի փոխարկերը :

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՑՈՒԿԻՆ

Կը ծախվի ի Դիւանատան Պատրիարքարանի ի Ղալաթիա ,  
եւ կը գտվի ամեն գրավաճառաց .բով և Եկեղեցեաց բանկարները :